

ՀԱՄԱԶԱՍՊ ՀԱՄԱՐԱՐՁՈՒՄՅԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԻՑ

Լրացավ հայ մշակույթի երախտավոր, ճանաչված գիտնական, բանաստեղծ և թարգմանիչ Համադասյ Ասատուրի Համբարձումյանի ծննդյան 100-ամյակը (1880—1985)։

Հ. Համբարձումյանը նամակագրական լայն կապեր է ունեցել հայ, ռուս և այլազգի գրողներից ու մտավորականներից շատերի հետ։ Նամակներից մի քանիսը, որոնք ուղղված են Գ. Լեոնյանին և Ավ. Խաչակյանին, պահվում են Հայկական ՍՍՀ կուլտուրայի մինիստրության ՍՊՀ-ի Զարինյի անվան գրականության և արվեստի թանգարանի (ԳԱԹ) համապատասխան ֆոնդերում։

Վարպետին ուղղված Հ. Համբարձումյանի նամակներից երկուսը գրվել են Հոմերոսի «Իլիականի» հայերեն թարգմանության խմբագրման առիթով։

Հրապարակվող նամակները պարունակում են ուշագրավ փաստեր, գիտողություններ և կարող են օգտակար լինել բանասեր գիտնականների համար։

ՅՈՒՐԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

1

Սիրելի ընկեր Գաբեգին Լեոնյան!

Ճանապարհին—Նրեանից գեպի մեր գաղթավայրը՝ Ելաբուզա, կարդացի «Սովետական գրականություն» ամսագրի համարները, ի միջի այլոց և քո պախոսականը «Наапет Кучак. Стихотворения, пер. Ал. Степане. Под ред. Антокольского. Армгиз. Ереван, 1941 г.»։

Զեմ կարող թաքցնել, որ ամսագիրն իր բովանդակությամբ ընդհանրապես թույլ է և աղուտ։ Ցավոք սրտի ես չկարողացա նրա մեջ գտնել որևէ մեծ լուրջ գործ։ Իրապես՝ դա մի գործ է, որում բացակայում է գեղարվեստական-բանասիրական ճշմարիտ գործը։ Այդ առիթով մանրամասն կգրեմ ընկեր Ռուբեն Զարյանին։ Իսկ սույն նամակիս նպատակն է՝ երկու խոսքով հնչել քո ականջին վերոհիշյալ քո պախոսականի մասին։

Պիտի խոստովանեմ, որ ամսագրում զետեղված բազմաթիվ, ճիշտը ասած անորակ և «անպատասխանատու» գրախոսականներից, քո հոդվածը համարյա միակն է, որն կարելի է ընդունել իբրև ամենից լավագույնն ու գերազանցը։ Սիրով և հետաքրքրությամբ կարդացի քո տեղին և արդարացի գիտողությունները։ Սակայն մի հանդամանք.— ինչո՞ւ թացատրել այն, որ լրջմիտ և բազմակողմանի ուշադիր բանասեր Գաբեգին Լեոնյանի հայացքից վրիպել է մի էական իրողություն.— այն, որ Քուլակ Նահապետը մի անգամ արդեն թարգմանված է ռուսերեն և թարգմանությունն այդ կատարել է մի ոմն Համադասյ Համբարձումյան «Песни любви Кучака Наапета. СПб. 1906 г.»²։

Հոգեբանորեն այդ անուշադրությունը պիտ բացատրել արհամարհանքի կամ անգիտության (անտեղյակ լինելու) հետևանքով։

Ո՞ր մեկն այդ երկուսից արդյոք ընդունել քո վերաբերմամբ։ Մի՞թե և դու կարողացար գրիչդ ուղղել ուրացողության այն ճանապարհով, որով սովորա-

բար ընթանում է մեր բանասիրությունն ու քննադատությունը: Քեզնից այդ սպասել ես չէի կարող:

Գուցե ունե՞ս որևէ արդարացում: Ուրախ կլինեմ, իմանալով այդ:

Ջերմագին ողջուններով քո Համ. Համբարձումյան

г. Ереван, Арм. АССР, ул. Ленина 7.

ԳԱԹ. Գ. Լեոնյանի ֆոնդ. № 1542.

2

27 հուլիսի 1943
Երևան

Սիրելի Ավետիֆ

Նրեանից ես մեկնեցի հուլիսի 2-ին, հնարավորություն չունենալով կրկին անգամ ձեզ գալու:

Իմ խոստումը Բասարգեչարի վերաբերմամբ կատարել եմ: Կարգադրություններ արել եմ, եթե տիկինը այնտեղ գնալու լինի, նրան ցույց կտան ամեն տեսակ աջակցություններ:

Հույս ունեմ՝ «Հատընտիրը»¹ կհանձնես Լուսիկ Համբարձումյանին ինձ ուղարկելու նպատակով:

Ելաբուգա հասա հուլիսի 24-ին: Մերոնք՝ առանձնապես վիկտորը² սըրտանց բարեում են քեզ և ձերոնց:

Ճանապարհին մանրամասն ծանոթացա «Սովետական» գրականություն» ամսագրի բովանդակության հետ, ընդհանուր առմամբ շատ աղոտ է և թույլ: Գրեթե քո կենցաղի պայմանների մասին:

Բարեկր ձերոնց, քո Հ. Համբարձումյան

ԳԱԹ. Ավ. Իսահակյանի ֆոնդ, № 1338:

3

12 ապրիլի 1943
Երևան

Սիրելի Ավետիֆ

Այսօր ընկ. Գուլքանյանի¹ մասնակցությամբ կայացավ խորհրդակցություն՝ «Իլիականի»² խմբագրական աշխատանքի սկզբունքների մասին:

Խորհրդակցությունը ընդունեց 1) որ թարգմանության չափը (միտրիկան) պետք է մնա անփոփոխ 2) որ խմբագրական աշխատանքը կատարելիս՝ բնավ հարկավոր չէ թարգմանությունը համեմատել այլ թարգմանությունների հետ (հարկավ չէ եթե տեղ-տեղ խմբագիրը ցանկանա իրազեկ լինել տեքստի՝ մանրամասն ձևավորման մասին, կարող է դիմել այլ թարգմանության, սակայն այդ պարտադիր չէ) և 3) որ խմբագրական աշխատանքը պիտ կենտրոնանա լեզվի հղկման մեջ, թարգմանությունը խորթ և անգործածական բառերից ազատելու մեջ: Խնդրում եմ հանձնարարեք ընկ. Արբունին³—ներկայանալ Արարատ Ղարիբջանին և ստանալ նրանից համապատասխան հրահանգներ:

Ձեզ միշտ հարգող
Համ. Համբարձումյան

ԳԱԹ. Ավ. Իսահակյանի ֆոնդ, № 1328:

19 հոկտեմբերի 1948
Երևան

Սիրելի Ավետիք

Այն օրվանից, երբ դու «Երևականի» թարգմանությունը անորակ հայտարարեցիր, մինչև այժմս չկարողացա քեզ հետ տեսնվել և լսել քո հիմնավորված կարծիքը:

Համոզված եմ, որ դու անկեղծաբար հայտնեցիր այդ կարծիքը, սակայն պիտ համաձայնվես, որ հասարակության առաջ այդ օրինակ կարծիքներ պետք է անշուշտ պատճառաբանված լինեն: Ինձ անձամբ, Համազասպ Համբարձումյանին, կարող էիր և կարող ես հազար անգամ կրկնել այդ, բայց ոչ հրապարակորեն:

Համարյա արսիոմայի շափ պարզ է ինձ համար, որ էպիկական ստեղծագործությունները, մասնավորապես «Երևականի» լայնալիր կտավը յուր անսահման մանրամասնություններով՝ անհամապատասխան է քո խառնվածքին, քո ստեղծագործական աշխարհայացքին, որը, զլիսավորապես, եղել է և է անշատական-քնարերգական: Այս կապակցությամբ պատահական չէ, որ քաջահանճար Հոմերոսը քեզ շատախոս է թվում և որ դու «Ոգիսականից» շատ ավելի նսեմ ես համարում «Երևականը»: Ես կարող եմ ապացուցել և անձամբ համոզված եմ, որ իմ թարգմանությունը բարձրորակ է, և եթե այդ համոզմունքը չլիներ, անմիջապես այդ գործը կոչնչանար:

Թարգմանության որակը, կարծում եմ և դու կհամաձայնվես այստեղ ինձ հետ, ենթադրում է. ա) թարգմանվող հեղինակի ոգու անվնաս և հարազատ պահպանումը, բ) թարգմանվող հեղինակի մտածելակերպի և նրա լեզվական ասարատի կատարյալ պահպանումը, գ) թարգմանվող հեղինակի ոճի և լեզվական-արտահայտիչ մեթոդների անարատ պահպանումը և դ) այն լեզվական-ոճական արժանիքները, որոնցով թարգմանված է երկը: Այս նախադրյալների կշիռքի վրա իմ «Երևականը» գրավում է առաջին երեք պայմանների կշիռը շատ բարձր տոկոսով, իսկ շորրորդ պայմանի տեսակետից կարող են տարբեր կարծիքներ լինել: Այսպիսի պարագաներում ես կարող եմ գործը բարձրորակ համարելու իրավագիտակցություն ունենալ:

Ժամանակն է գրական երկերի որակի, նրանց արժանիքների վճռական, սահմանադիր և մենաշնորհ որոշողը, ժամանակն է, որ հասարակության բյուրավոր անդամների գիտակցությունների մեջ գրական երկը գանածծի—ենթարկելով, նշավակելով և դրվատելով, վերջ ի վերջո հայտնաբերում է յուր կտրական վճիռը այդ երկի որակի մասին: Իմ «Երևականը» տակավին նորածին է, և խիստ դժվար է այդ նորածին մանկիկին նայելով, նախորոշել նրա գալիք ապագա տաղանդի հմայքն ու մեծությունը:

Սակայն թողնենք այս հարցը, քանի որ խոսելու ավելի կարևոր խնդիր կա:

Կարոտատենչ խնդիր է ինձ համար «Երևականի» խմբագրությունը: Նրա էքսիմբագիրը՝ ընկ. Արբունը, ագնվագույն է և այդ առումով չկա և չի կարող կասկած լինել:

Սակայն այդ մեծարելի էքսիմբագիրը ճիգեր է թափում, աշխատում է, իմ սրտի և գիտակցության մեջ փռել հայր Արսեն Բագրատունու և Ղազիկյանի Հոմերոսյան դաշտավայրերում տնկած ծաղկափթիթ պարտեզները: Բայց ան-

շուրջ են այդ ճիգերը և անիրագործելի: Իմ պարտեղի և նրանց պարտեղների մեջ անանցանելի անդունդներ կան:

«Իլիականի» առաջին 12 երգը մանրամասնաբար նայեցի, ստուգեցի և ճշտեցի բոլոր կատարված ուղղումները, մասնավորապես, քո բոլոր ուղղումները ընդունեցի և միանգամայն գոհ եմ քո կատարած փոփոխումների վերաբերմամբ: Միայն երկու աննշան կետ կար («նախ» և «հանկարծ» բառերի մասին), որոնք դժվարացա ընդունել, որովհետև դրանք փոխում են տեքստի լիմաստը (այդ մասին տրված է համառոտ բացատրություն): Իսկ ինչ վերաբերվում է իմ սիրելի Արբունի ուղղումներին, դրանք բաժանեցի շորս կատեգորիաների:

ա) Ընդունելի, երկի բովանդակության և իմաստին չվնասող ուղղումներ:

բ) Անիմաստ, բառամրցության հետևանքով կատարված էական նշանակություն չունեցող ուղղումներ:

գ) Բնագրի իմաստը նսեմացնող, փոխող, Հոմերոսի աշխարհայացքին հակառակ, երկի ներքին բովանդակությանն հակադրվող, բնագիրը խեղաթյուրող ուղղումներ:

դ) Գոյություն ունեցող ուրիշ թարգմանությունների հետևողությամբ և նմանողությամբ կատարված անստույգ և անվավեր ուղղումներ (Բագրատունի, Ղազիկյան և այլն):

ե) Գրական-գեղարվեստական տեսակետից, արվեստի և արտահայտչական մեթոդների բարձրորակության տեսակետից թույլ, անմշակ, պրոզաիկ ուղղումներ:

Ընկեր Արբունը տվյալ 8 երգերի մեջ (չորսը գուցե խմբագրել) կատարել է մոտավորապես 2000 ուղղում, որից մոտավորապես 1100—1200 ուղղումներ սլատկանում են առաջին կարգին: Այս տեսակի ուղղումները ես ուրախությամբ և սրտալի գոհունակությամբ ընդունել եմ և մտքել տեքստի մեջ, դրանց դեմ առարկել չեմ կարող և իրավունք չունեմ:

Իսկ ինչ վերաբերվում է մյուս տեսակի ուղղումներին, ապա պետք է ասեմ, որ այդպիսիներն չեմ կարող ընդունել: Իբրև երկի որակը նսեմացնող, «Իլիականի» էությունը վնասող փոփոխություններ, դրանք միանգամայն անհանդուրժելի, հետևաբար և անընդունելի են ինձ համար:

Համոզված եմ, որ նաև դու, եթե համոզվես, որ իմ ասածը ճշմարտացի է, անշուշտ կժխտես այդօրինակ ուղղումները:

Մեր սրտատենչ էքսխմբագրի գործը լիակատար բնութագրված չի լինի, եթե այստեղ չհիշատակեմ մի հանգամանք ևս. ընկ. Արբունը յուրահատուկ մտածելակերպ ունի: Նրա ըմբռնողության այդ բնույթը արտացոլվել է նաև նրա լեզվական արտահայտությունների մեջ. թեպետ մեր արևելահայ լեզվով խոսել գիտե փարթամաբար, սակայն նրա լեզվային ապարատը հաճախակի ցույց է տալիս իր կախումը հիշյալ մտածելակերպից. օրինակ՝ մենք ասում ենք «պտույտ գալ», ընկ. Արբունն ընդունում է «պտուտք», «պտուտք անել»: Մենք ասում ենք—զոհեր տալ աստվածներին, նա ընդունում է «զոհեր անել», մեր բարեգույ լեզվով «իսկ և իսկ» նշանակում է նույն և եթ, նույնական, իսկ նա այդ հասկանում է իբրև ժամանակի ձևավորում «իսկույն, անմիջապես» և այլն. այդպիսի մտածողական և հասկացություններին հատուկ էական տարբերակներ, որոնք անխուսափելիորեն պիտ արտացոլվեն խմբագրական ուղ-

դումների մեջ, ես աշխատեցի այդ տիպի խորթությունները արմատորեն վերացնել:

Հուսով եմ, որ այս քննական դիտողությունները բնավ չեն հասկացվի իբրև նսեմացում այն ջերմաջերմ զգացմունքների, որոնք սրտաբուխ կերպով ևս տածում եմ դեպ իմ սիրելի Արբունը:

Բոլոր ուղղումների քննական բացատրությունները բերված են տեքստերի հանդեսը՝ համապատասխանորեն: Մնում է միայն, որ քո հեղինակավոր կարծիքը լսենք և որ գործի տեմպը արագապես ընթանա:

Ջերմագին ողջույններով քո Համ. Համբարձումյան

ԳԱԹ, ԱՎ. Իսահակյանի ֆոնդ, № 1328:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1

1. Նամակն անթվակիր է. պետք է ենթադրել, որ այն գրվել է 1943 թ. ամռանը:

2. «Напет Кучак, Песни любви» գրքուկը Համազասպ Համբարձումյանի փոքրիկ առաջարանով և ուսեսերեն թարգմանությամբ լույս է տեսել ոչ թե 1906 թ., ինչպես թյուրիմացարար նշված է նամակում, այլ 1904 թ.:

2

1. Խոսքը ԱՎ. Իսահակյանի «Հատընտիր» (բանաստեղծությունների ժողովածու) մասին է. որը լույս է ածվել 1943 թ. Երևանում:

2. Նկատի ունի որդուն՝ սովետական ականավոր գիտնական, աստղագետ, ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտ Վիկտոր Համբարձումյանին:

3

1. Խոսքը Հայկական ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Վարդան Գույրանյանի (1902—1976) մասին է:

2. Համազասպ Համբարձումյանը հին հունարեն բնագրից թարգմանել էր Հոմերոսի «Իլիականը», որը և պետք է լույս տեսներ 40-ական թվականների վերջերին, սակայն ինչ-ինչ պատճառով լույս չտեսավ: «Իլիականը» Հ. Համբարձումյանի թարգմանությամբ և բանաստեղծ Ս. Վահանունի խմբագրությամբ լույս տեսավ ավելի ուշ՝ 1955 թ.:

3. Խոսքը հայտնի թարգմանիչ Արթուր Տայանի մասին է: